ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 19 >> հոկտեմբերի 2012թ. N 78 - Ա

ք. Արմավիր

ՎԱՐԱԶԴԱՏ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի առաջին մասով և հիմք ընդունելով <<Գնումների աջակցման կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության ծանուցումը:

կարգադրում եմ՝

1. ԵՄ Սիգմա ծրագրի փորձագետների կողմից գնումների բողոքարկման խորհրդի անդամների համար կազմակերպվող թվով 3-րդ շարունակական>> սեմինար-դասընթացին մասնակցելու նպատակով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վարազդատ Մկրտչյանին 2012 թվականի հոկտեմբերի 22-ից հոկտեմբերի 23-ը ներառյալ գործուղել քաղաք Երևան՝ <<Բեստ Վեստերն Կոնգրես >> հյուրանոց:
2. Վարազդատ Մկրտչյանի գործուղման մեջ գտնվելու ժամանակահատվածում վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Հովհաննես Հարությունյանին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ Վ.Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարում:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հոկտեմբերի 22-ից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ